

արգիլել եւ պահել իր մօտ բոլոր այն տեսակ ապրանքները, որոնք իրեն պիտի յանձնուին ըստ վերոյիշեալին, մինչեւ որ զանոնք կարենան ուղարկել Անգլիական նաւերով՝ Թուրքիա, Վենետիկ, եւ Լիվոնիա գացող եւ ապահովութիւն պիտի ստացուի, որ անոնք ուրիշ նաւահանդիստ կամ վայր չպիտի հանուին Եւրոպայի մէջ, բացի այն վայրէն, ուր որ զրկուած է ապրանքը յիշեալ հայ տէրերէն եւ կամ իրենց գործակալներէն: Եւ, հուսկ, կը յայտարարուի, որ համաձայն են, առանց նրկատի առնելու նախապէս ըսուածները, Ընկերութեան կողմէն Թուրքիա զրկուելիք ապրանքներէն պահել կամ վար դնել իրենց գործածութեան համար որեւէ մաս, որ օրինաւոր պիտի նկատուի, նախ ըսուածին պէս, վճարելով տէրերուն մէկ երրորդ զուտ շահ առաջին արժէքին վրայ: Ըսուածին պէս, բոլոր բռնագլխերը, դանձումները եւ ետ վճարումները, ինչ որ ալ ըլլան, նախ պիտի զեղչուին եւ յետոյ նախնական գինին վերածուին: Այս առթիւ Հնդկաստանի ութը բուրի պիտի հաշուուի մէկ փառնտ արծաթ: Որուն ի վկայութիւն, կառավարիչը, փոխ-կառավարիչը եւ յիշեալ Ընկերութեան գործադիր անդամներուն երեքը կը ստորագրեն եւ կը զետեղեն յիշեալ Ընկերութեան մեծ կնիքը, այս Յունիսի 22-րդ օրը, Փրկչին 1688 տարւոյն, եւ Տէր Թագաւոր ձէյմս Երկրորդի իշխանութեան չորրորդ տարին շնորհիւ Տեառն՝ Թագաւոր Անգլիոյ, Սկոտլոնդի, Ֆրանսայի եւ Իրլանտայի, Պաշտպան Հաւատի եւն.:

- Պէնճամին Պաթուրսդ, Կառավարիչ:
- Benjamin Bathurst.
- Ճօսիա Չայլս, փոխ-Կառավարիչ:
- Josiah Child.
- Ուսթըր (Worcester)
- Ճան Մուր (John Moore)
- Ճէօրճ Պուն (George Boun)՝

Շատ կարեւոր եւ հետաքրքրական է այս վաւերացումը, որուն նպատակն է Հայերը անկախ գործունէութենէ հեռացնել եւ Ընկերութեան ենթակայ ընել: Պայմաններէն կը հասկցուի, որ Հայերը Հնդկաստանէն ապրանքներ կը տանէին Թրքական շուկաները, հաւա-

նարար Իզմիր եւ կամ Թուրքիոյ վրայով Պալքանեան երկիրները ու մանաւանդ Լեհաստան: Այս ապրանքներուն մէջ կը յիշուի մետաքսը: Սակայն, վստահօրէն Պարսկաստանէն կամ Հայկովկասէն արտածուած հում մետաքսի քանակին եւ նոյնիսկ որակին հետ բաղդատմամբ ան շատ փոքր քանակութիւն մըն էր:

Դարձեալ վաւերացումը կը յիշէ, որ Հայերը կը զրկէին ապրանք նաեւ Արարիոյ, այսինքն՝ Հալէպի վրայով:

\* \* \*

Վերի դաշնագրին հետ կը տրուի ուրիշ, աւելի կարճ թէեւ նոյնքան կարեւոր, համաձայնագիր մը, որուն թարգմանութիւնը կուտամ ստորեւ.—

«Արեւելեան Հնդկաստանի մէջ առեւտուր ընող Լոնտոնի վաճառականներու Ընկերութեան Կառավարիչն եւ Ընկերութիւնը՝ բոլոր անոնց, որոնց կը վերաբերի, կ'առաքէ ողջոյն: Մեղի ներկայացուած է, որ Հայ ազգը ցանկութիւն ունի մեր մարդոց հետ առեւտուր ընել Արեւելեան Հնդկաստանի մէջ: Մենք այդ ազգը քաջալերելու, հաստատուելու եւ բնակեցելու համար մեր պահականոցներուն ու քաղաքներուն մէջ, մեր Ընկերութեան պատկանող եւ մեր իրաւասութեան տակ գինուող Արեւելեան Հնդկաստանի մէջ ներկայով կը յայտարարէ, կը շնորհէ ու կը համաձայնի, որ երբեւիցէ քառասուն կամ աւելի Հայ ազգայինք բնակիչ ըլլան որեւէ պահականոցի, քաղաքի մէջ Ընկերութեան պատկանող ի Արեւելեան Հնդկաստանի: Յիշեալ Հայերը ոչ միայն պիտի ունենան եւ վայելեն ազատ գործածութիւն եւ ծիսակատարութիւն իրենց կրօնքին, այլ եւ անոնց պիտի թոյլատրուի մաս մը զետին՝ եկեղեցի մը կառուցանելու համար, ուր իրենց կերպով պաշտամունք եւ արարողութիւն կատարեն առ Աստուած: Եւ մենք մեր միջոցներով պատճառ պիտի ըլլանք յարմար եկեղեցւոյ մը կառուցման համար տալ փայտակերտ, որ յետոյ յիշեալ Հայերը կրնան նորոգել եւ քարաշէն ընել կամ ուրիշ հաստատուն նիւթերով վերակառուցանել իրենց ի հաճոյս: Եւ յիշեալ Կառավարիչն եւ Ընկերութիւնը պիտի տրամադրեն նաեւ տարեկան յիսուն փառնտ, եօթը